ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«09» «սեպտեմբերի» 2026 թվական № 303-Լ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 107-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կլիմայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետով և վարչապետի 2026 թվականի սեպտեմբերի 2-ի N 844-Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչությանը նշանակել Կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի քարտուղարություն:

2. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մարտի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» N 107-Լ հրամանի 5-րդ հավելվածի 5-րդ կետի 2.1 ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2.1) Կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի քարտուղարության գործառույթների իրականացում,»:

Ստորագրող
ՀԱՅԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ
2103900790

2026-09-09 20:31:01 GMT+4

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Երևան